ԵՐԵՎԱՆ • ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ • ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՃԵՄԱՐԱՆ
LYCEUM

«Շիրակացու ճեմարան»
Միջազգային գիտակրթական համալիր

ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերանայվել է 01.09.2025թ.

ROUND SQUARE

WE ARE A CIS INTERNATIONALLY ACCREDITED SCHOOL

ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լեզուների ուսուցման փիլիսոփայություն

Ճեմարանական համայնքի բոլոր անդամների համար մայրենի և օտար լեզուների ուսուցումը կարևոր նշանակություն ունի: Այն սովորողներին պատրաստում է ազատորեն շփվելու բազմալեզու միջավայրում, խթանում է հարգանքն ու հանդուրժողականությունը այլ մշակույթների մարդկանց հանդեպ և նպաստում է տարբեր համատեքստերում արդյունավետ համագործակցությանը:

Մենք գիտակցում ենք, որ լեզուն ինքնության և մշակութային պատկանելության ցուցիչն է: Յուրաքանչյուր սովորող իրավունք ունի պահպանելու և զարգացնելու իր մայրենի լեզուն՝ միաժամանակ սովորելով նոր լեզուներ՝ ակադեմիական և միջմշակութային աճի համար: Բազմալեզվությունը գնահատվում է որպես փաստ, իրավունք և ռեսուրս, որը խթանում է մտավոր զարգացումը, խորացնում է ուսուցման որակը և ամրապնդում է համաշխարհային բաղաքացի լինելու փաստը:

ՄԲ (IB) առաքելության և սովորողի նկարագրին համահունչ՝ Ճեմարանում լեզուների ուսուցումը զարգացնում է միջազգային մտածելակերպ և սովորողներին դարձնում հաղորդակցվողներ, որոնք վստահորեն արտահայտվում են մեկից ավելի լեզուներով, լայնախոհ և տեսակետների բազմազանությունը հարգող անձինք են:

Քանի որ ուսուցման բոլոր գործընթացները լեզվի միջոցով և լեզվի շնորհիվ են իրականանում, Ճեմարանի յուրաքանչյուր ուսուցիչ նաև լեզվի ուսուցիչ է: Յուրաքանչյուր ուսուցիչ պատասխանատվություն ունի ձևավորելու դրական վերաբերմունք լեզուների հանդեպ և իր առարկայի շրջանակում ներառելու ակադեմիական գրագիտության տարրեր՝ ապահովելու հավասար մուտք բոլոր սովորողների համար, ներառյալ նրանց, ովքեր կրթվում են ոչ իրենց մայրենի լեզվով:

Լեզվի ուսուցումը Ճեմարանում դասասենյակի սահմաններից դուրս է գալիս. լեզուների խմացությունը սովորողներին ողջ կյանքի ընթացքում շարունակական ուսումնառության հնարավորություն է տալիս՝ ձևավորելով և զարգացնելով միջմշակութային երկխոսությունը և պատասխանատու բաղաքացի լինելու դիրքորոշումը:

2. Լեզվի ուսուցման նպատակներն ու խնդիրները

Շիրակացու ճեմարանում լեզվի ուսուցման նպատակն է սովորողներին զինել այնպիսի հմտություններով, գիտելիքներով և կարողություններով, որոնք թույլ կտան հաջողության հասնել բազմալեզու աշխարհում: Լեզու սովորելու գործընթացը զարգացնում է ոչ միայն գործնական հաղորդակցությունը, այլև մտավոր աճը, միջմշակութային ըմբռնումը և ինքնության ձևավորումը: Համահունչ ՄԲ (IB) առաքելությանը և սովորողի նկարագրին՝ Ճեմարանը ձգտում է ապահովել, որ բոլոր սովորողները, անկախ իրենց լեզվական նախապատմությունից, ունենան հավասար հնարավորություն ակադեմիական հաջողության և անձնական աճի համար:

Լեզուների ուսուցումը կազմակերպվում է հինգ փոխկապակցված ուղղություններով.

2.1. Լեզվի գործնական ուսուցում (լեզվի կիրառում)

Սովորողները կիրառում են լեզուն առօրյա կյանքում և ուսումնական միջավայրում՝ լսելու, հասկանալու և իրենց մտքերը հստակ արտահայտելու համար: Նրանք վարժվում են բանավոր և գրավոր արդյունավետ հաղորդակցությանը, սովորում են հարգանքով արտահայտել զգացմունքները և մասնակցում են միջմշակութային երկխոսությանը: Գործնականում լեզվական զարգացումը ներառում է նաև թվային և մեդիա գրագիտության կիրառումը, ինչը հնարավորություն է տալիս սովորողներին շփվելու օտար և բազմատարր միջավայրերում:

2.2. Լեզվի ուսումնասիրություն (լեզվի ճանաչում)

Սովորողները վերլուծում և խորացնում են իրենց գիտելիքները լեզվական համակարգերի, բերականության, բառապաշարի և ոճական առանձնահատկությունների վերաբերյալ: Նրանք ուսումնասիրում և համեմատում են տարբեր լեզուների ժանրերը, զարգացնում են լեզվական ճնշադատական գիտակցություն՝ ըմբռնելով, թե ինչպե՛ս է լեզուն ձևավորում իմաստը, ազդում տեսակետների վրա և փոխանցում մշակույթ: Այս ձևով սովորողները դառնում են գիտակից՝ հասկանալով հաղորդակցման և՛ տեխնիկական, և՛ սոցիալական կողմերը:

2.3. Լեզվով ուսումնառություն (լեզվի միջոցով գիտելիքի և կարողության ձեռքբերում)

Սովորողները լեզուն կիրառում են որպես մտավոր և ակադեմիական միջոց՝ տարբեր առարկաների ոլորտում գիտելիք կառուցելու համար: Հարցումների օգնությամբ նրանք հավաքում և վերլուծում են տվյալները, ճնշարկում արդյունքները և կազմում առարկայական հաշվետվություններ: Նրանք սովորում են կողմնորոշվել տարբեր գիտակարգերի լեզվական տիրույթում (բնագիտական, մաթեմատիկական, գրական, պատմական) և վստահորեն ներկայացնում են իրենց հետազոտության արդյունքները բազմազան լսարանների: Նրանք, ովքեր սովորում են ոչ իրենց մայրենի լեզվով, ստանում են համապատասխան աջակցություն և տարբերակված մոտեցումներ՝ ապահովելով հավասար հասանելիություն ուսումնական գործընթացում:

2.4. Լեզուն և ինքնությունը

Սովորողները հաստատում են իրենց ինքնությունը՝ մայրենի և լրացուցիչ լեզուների ուսումնասիրության միջոցով՝ ընդունելով բազմալեզվությունը որպես արժեքավոր պաշար/ռեսուրս: Նրանք գնահատում են իրենց մայրենի լեզուն և միաժամանակ հարգում են այլ անձանց լեզուներն ու մշակույթը:

2.5. Լեզվի ուսուցում կյանքի համար

Սովորողները զարգացնում են վստահություն և հմտություններ շարունակելու լեզուներ ուսումնասիրել դասասենյակից դուրս՝ հնարավորություն ստանալով ակտիվորեն մասնակցելու տեղական և համաշխարհային համայնքների, մասնագիտական միջավայրերի և միջմշակութային փոխանակումների գործընթացներին:

3. Ուղղորդող սկզբունքներ լեզվի ընտրության և ուսումնական ծրագրերի վերաբերյալ

3.1.Կրտսեր դպրոցի ծրագիր **(PYP)**

3.1.1. Կրտսեր դպրոցի ծրագրում (PYP-ում) ուսուցման հիմնական լեզուն հայերենն է, որը ձևավորում է գրագիտության, հաղորդակցության և մշակութային ինքնության ամուր հիմք:

3.1.2.Հայերենի հետ մեկտեղ սովորողները աստիճանաբար ծանոթանում են ռուսերենին և անգլերենին արդեն վաղ տարիքից՝ ՄԲ-ի (IB)՝ բազմալեզվայնությունը խթանելու սկզբունքին համահունչ:

3.1.3. Լեզվի ուսուցումն այստեղ միջառարկայական է և հետազոտական բնույթ ունի: Լեզուն ոչ միայն առանձին առարկա է, այլև ուսումնական ծրագրի բոլոր դասընթացներում ներառված՝ ապահովելով լսելու, խոսելու, կարդալու և գրելու հմտությունների զարգացումը բոլոր առարկաների ուղղությամբ:

3.1.4.Հատուկ աջակցություն է տրամադրվում այն սովորողներին, որոնք կրտսեր դպրոցի ծրագրում (PYP) ընդգրկվում են առանց հայերենի բավարար իմացության: Տարբերակված ու փուլային դասավանդման մեթոդները ապահովում են ներառականությունը՝ միևնույն ժամանակ գնահատելով և արժևորելով սովորողների մայրենի լեզուները:

3.1.5. Կրտսեր դպրոցի ծրագիրը (PYP) կարևորում է բազմագրագիտության/ multiliteracies զարգացումը: Սովորողները շփվում են տարբեր լեզուներով պատմություններ, երգեր, խաղեր և թվային գործիքների միջոցով՝ ինքնավստահություն ձեռք բերելով և դեռ վաղ տարիքից միջմշակութային գիտակցություն ձևավորելով:

3.2. Միջին դպրոցի ծրագիր **(MYP)** և ավագ դպրոցի հեղինակային ծրագիր **(AP)**

3.2.1. Միջին և ավագ դպրոցում (հեղինակային ծրագիր) ուսուցման պաշտոնական լեզուն հայերենն է՝ համաձայն ՀՀ «Լեզվի մասին» օրենքի: Բոլոր առարկաները դասավանդվում են հայերենով, իսկ հայոց լեզվի և գրականության ուսումնասիրությունը 5–12-րդ դասարաններում պարտադիր է՝ ապահովելու լեզվական վարպետություն և մշակութային շարունակականություն:

3.2.2.Հայերենի հետ մեկտեղ՝ որպես պետական պահանջ, բոլոր սովորողները պարտադիր ուսումնասիրում են ռուսերեն: Բացի դրանից՝ յուրաքանչյուր սովորող ընտրում է ևս մեկ օտար լեզու՝ ըստ անձնական հետաքրքրությունների և ակադեմիական նպատակների: Ճեմարանն առաջարկում է ֆրանսերենի, գերմաներենի, իսպաներենի կամ ռուսերենի ուսումնասիրություն սկսնակների համար («ab initio»): Սկսած 10-րդ

դասարանից՝ հումանիտար հոսքի սովորողները կարող են ընտրել նաև երրորդ օտար լեզու՝ խթանելով բազմալեզվությունը և միջազգային մտածելակերպը:

3.2.3.Հայերենը բավարար չիմացող սովորողների համար Ճեմարանը կազմակերպում է անհատական կամ փոքր խմբերով արագացված ուսուցում, որը կենտրոնանում է լեզվի ակադեմիական և սոցիալական կողմերի զարգացման վրա՝ ապահովելով մուտք ուսումնական ծրագիր՝ միաժամանակ պահպանելով սովորողների մայրենի լեզուն:

3.2.4.Օտար լեզուների ուսուցումը տարբերակված է, իսկ Միջին դպրոցի ծրագրում (MYP) իրականացվում է փուլերով կամ ֆազային ուսումնառություն (մակարդակային խմբերով): Ուսումնական տարվա սկզբում սովորողները հանձնում են հայտորոշիչ թեստ և խմբավորվում են իմացության մակարդակին համապատասխան խմբերում: Սովորողներին հնարավորություն է տրվում առաջադիմության հիման վրա տեղափոխվել ուսումնառության հաջորդ փուլ:

3.2.5.Հատուկ պարապմունքներ կարող են կազմակերպվել սովորողների մայրենի կամ հաղորդակցման լեզուներով՝ նպաստելով ներառմանը և դպրոցի համայնքում հարմար ինտեգրմանը: Սա ևս մեկ անգամ ընդգծում է, որ բազմալեզվությունը և՛ իրավունք է, և՛ պաշար/ռեսուրս:

3.2.6.Ավագ դպրոցում Ճեմարանն առաջարկում է նաև միջազգային հետևություններին նախապատրաստող դասընթացներ (TOEFL, IELTS՝ սովորողի խնդրանքով): Այս դասընթացներն ապահովում են սովորողների մուտքը միջազգային բուհեր և խթանում են շարունակական ուսումնառությունը մի քանի լեզուներով:

3.3.Դիպլոմային ծրագիր (DP)

3.3.1. Դիպլոմային ծրագրում (DP) ուսուցման հիմնական լեզուն անգլերենն է, ինչը սովորողներին հնարավորություն է տալիս լիարժեք օգտվելու ՄԲ–ի ծրագրից և միջազգային պաշարներից/ռեսուրսներից:

3.3.2. ՄԲ–ի առարկայական խմբերի կառուցվածքին համապատասխան՝ Դիպլոմային ծրագրում լեզուները բաժանվում են հետևյալ կերպ.

- Խումբ 1. Լեզվի և գրականության ուսումնասիրություն (Լեզու Ա(A). Գրականություն)
  Առաջարկվում է հայերեն, ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն: Այս դասընթացները սովորողներին հնարավորություն են տալիս ուսումնասիրելու գրականություն իրենց մայրենի կամ այլ լեզվով, որից առավել ուժեղ են: Սովորողները կարող են ընտրել նաև երկու տարբեր լեզու Ա (A) դասընթաց՝ միաժամանակ կատարելով Խումբ 1–ի և Խումբ 2–ի պահանջները:
- Խումբ 2. Լեզվի ձեռքբերում (Language Acquisition)

  Այս դասընթացները նախատեսված են այն սովորողների համար, որոնք արդեն որոշակի փորձ ունեն այդ լեզվի մեջ: Առաջարկվում են անգլերեն, ռուսերեն, իսպաներեն, գերմաներեն և ֆրանսերեն:

- Խումբ 2. Լեզվի ձեռքբերում (ab initio)
  Այս դասընթացները նախատեսված են այն սովորողների համար, որոնք գրեթե փորձ չունեն, դեռևս

սկսնակ են տվյալ լեզվի ուսուցման ոլորտում: Առաջարկվում են խոպաներեն, ֆրանսերեն և գերմաներեն:

3.3.3. Դիպլոմային ծրագրի (DP) յուրաքանչյուր սովորող պարտավոր է ընտրել առնվազն մեկ լեզու Ա(A) և մեկ լեզու B/ab initio/: Այլընտրանքային տարբերակով սովորողը կարող է ընտրել երկու տարբեր լեզու Ա (A) դասընթաց, ինչը նույնպես բավարարում է Խումբ 1-ի և Խումբ 2-ի պահանջները:

3.3.4. Ճեմարանը տրամադրում է նաև «Ինքնուսուցմամբ լեզու Ա(A)» (SSST) տարբերակ, որի միջոցով սովորողները կարող են ինքնուրույն ուսումնասիրել գրականություն իրենց մայրենի լեզվով, եթե այն պաշտոնապես չի առաջարկվում կրթարանում: SSST յուրաքանչյուր սովորողի համար ճշանակվում է համապատասխան դեկավար, որը վերահսկում է ՄԲ-ի չափանիշների համապատասխանությունը և տրամադրում է ակադեմիական աջակցություն:

3.3.5. ՀՀ բաղաքացիները պարտադիր պետք է ուսումնասիրեն հայերեն և հանձնեն պետական ընություն 12-րդ դասարանում (հունվար/հունիս ևստաշրջան):

3.3.6. Օտարերկրացի սովորողների համար Ճեմարանը կազմակերպում է «Հայագիտություն» միացյալ դասընթաց, որը ներառում է հայոց լեզու, գրականություն, պատմություն և մշակույթ: Սա հնարավորություն է տալիս միջազգային սովորողներին խորացնելու գիտելիքները հյուրընկալ երկրի ժառանգության շուրջ: Մասնակցությունը խրախուսվում է, բայց պարտադիր չէ:

4. Ծրագրի ամփոփ աղյուսակ

Ծրագիր	Ուսուցման լեզու	Առաջարկվող լեզուներ	Դասընթացի տեսակ	Նշումներ / Լրացուցիչ դրույթներ
PYP (կրտսեր դպրոցի ծրագիր, **1–4** դաս.)	Հայերեն (հիմնական), աստիճանա կան ներմուծում՝ անգլերեն և ռուսերեն	–Հայերեն (պարտադիր) –Ռուսերեն (ներմուծվում է վաղ դասարաններ ում) –Անգլերեն (աստիճանական խորացում)	Լեզու A (հայերեն) Լեզվի ձեռքբերում (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)	– Հայերենի գրագի տության ամուր հիմք. – Միջառարկայական լեզվակրթություն. – Վաղ տարիքում բազմալեզվայնության փորձառություն. – Տարբերակված աջակցություն ոչ հայախոսների համար.
Միջին դպրոցի ծրագիր **MYP /** ճեմարանի ծրագիր **(5–10** դաս.)	Հայերեն (հիմնական)	– Հայերեն (պարտադիր) –Ռուսերեն (պարտադիր) – Մեկ լրացուցիչ օտար լեզու՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն կամ ռուսերեն (ab initio –սկսնակների համար)	Լեզու Ա (A) (հայերեն) Լեզվի ձեռքբերում (անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն)	– Տեղաբաշխման թեստ և փուլային ուսուցում – Արագացված/անհատական աջակցություն՝ հայերենից թերի գիտելիքներ ունեցողների համար – Սկսած 10–րդ դասարանից (հումանիտար հոսք)՝ երրորդ օտար լեզվի ընտրության հնարավորություն – Լրացուցիչ նախապատրաստում միջազգային ֆիններին (TOEFL/IELTS՝ ըստ պահանջի) – Օտար լեզուների արտադասարանական գործունեություն
Ավագ դպրոցի հեղինակային ծրագիր **(11–12** դաս.)	Հայերեն (հիմնական), ինտեգրում՝ ռուսերեն և անգլերեն	– Հայերեն (բարձր մակարդակի գրականություն, ակադեմիական գրություն, հետազոտություն) – Ռուսերեն (պարտադիր) – Անգլերեն (ակադեմիական և հետազոտական կենտրոնացում) – Լրացուցիչ օտար լեզու (ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն)	–Բարձր մակարդակի գրականություն և ակադեմիական գրություն (հայերեն, ռուսերեն, անգլերեն) –Լեզվի ձեռքբերում (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն)	– Հեղինակային գրություն, ֆիննադատական վերլուծություն և հրատարակչական հմտությունների զարգացում – Ակադեմիական խոսույթի և համեմատական գրականության հմտությունների ձևավորում – Նախապատրաստում համալսարանական ուսման և բազմալեզու հեղինակային աշխատանքի համար – Լրացուցիչ նախապատրաստում միջազգային ֆիններին (TOEFL/IELTS՝ ըստ պահանջի)
DP (Դիպլոմային ծրագիր, **11–12** դաս.)	Անգլերեն (հիմնական)	– Խումբ **1** (Լեզու Ա (A). Գրականություն)՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն– Խումբ **2** (Լեզվի ձեռքբերում)՝ անգլերեն,	Խումբ **1** (Լեզու Ա (A) Խումբ **2** (Լեզվի ձեռքբերում)՝	– Բոլոր սովորողները՝ առնվազն մեկ Լեզու A և մեկ Լեզու B, կամ երկու Լեզու A դասընթաց. – ՀՀ բաղաքացիներ՝ պարտադիր պետական ֆիններ հայերենից (12–րդ դաս. հունվար/հունիս). – Ոչ ՀՀ բաղաքացիներ՝ հայագիտության հարստացնող դասընթաց (լեզու, գրական նություն, պատմություն, մշակույթ)

		ռուսերեն, ֆրանսերեն, իսպաներեն, գերմաներեն – Խումբ **2 (ab initio)**՝ իսպաներեն, ֆրանսերեն, գերմաներեն– **SSST (**Ինքնուսուցմամբ լեզու **A)**՝ ցանկացած մայրենի լեզու (հաստատված)		– Հատուկ շեշտադրում՝ մայրենի լեզվի ուսուցման իրավունքի վրա

5. Լեզվի ուսուցման և ուսումնառության մոտեցումներ

5.1. Տարբերակված ուսուցում և գնահատում

Շիրակացու ճեմարանում լեզվի ուսուցումն իրականանում է հավասարության սկզբունքով. բոլոր սովորողները պետք է հնարավորություն ունենան ներգրավվելու ծրագրում՝ անկախ խմացության մակարդակից՝ թե՛ ուսուցման լեզվից, թե՛ օտար լեզուներից:

5.1.1. Անհատականացված պլանավորում. ուսուցիչները, համագործակցելով հոգեբանների և ուսուցման աջակցության մասնագետների հետ, մշակում են անհատական ուսումնական պլաններ՝ հարմարեցված նյութերով, տարբերակված առաջադրանքներով և գնահատման ճկուն գործիքներով՝ հաշվի առնելով սովորողի հետաքրքրությունները, կարողություններն ու ուսումնառության ոճերը:

5.1.2. Աջակցություն ոչ հայախոսներին. սովորողների համար, որոնք դեռ բավարար չեն տիրապետում ուսուցման լեզվին (հայերեն), կազմակերպվում են անհատական պարապմունքներ մայրենի կամ հասանելի լեզվով՝ ապահովելով աստիճանական ինտեգրում:

5.1.3. Բաց թողածի լրացում. կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ կամ խորհրդատվական ժամեր հետ մնացողների կամ թեմաները բաց թողածների համար՝ ապահովելու ուսումնառության շարունակականությունը և բացերի լրացումը:

5.1.4. Ծնողների մասնակցություն. ծնողները, ըստ անհրաժեշտության, ներգրավվում են լրացուցիչ աջակցության ռազմավարությունների մշակման մեջ այն սովորողների համար, որոնք բախվում են լեզվական լուրջ խոչընդոտների:

5.1.5. Փուլային ուսուցում **(MYP)**. 5–10-րդ դասարաններում օտար լեզուների ուսուցումը կազմակերպվում է փուլերով (մակարդակային խմբերով)՝ ըստ հայտորոշիչ թեստերի արդյունքների: Սա ապահովում է համարժեք մակարդակի միջավայրում սովորողների զարգանալու հնարավորությունը և նվազեցնում է հոգեբանական ճնշումը: Տեղաբաշխումը վերանայվում է ամեն տարի:

5.1.6. Տեղաբաշխման թեստեր. ուսումնական տարվա սկզբում իրականացվում են լեզվական գիտելիքների ստուգումներ՝ խմբավորելու համար սովորողներին: Արդյունքների աճը հավաստվում է ընթացիկ գնահատումով:

5.1.7. Առաջընթաց և ճկունություն. յուրաքանչյուր կիսամյակի ավարտին սովորողներին հնարավորություն է տրվում վերաթեստավորվել և տեղափոխվել հաջորդ՝ բարձր փուլ:

5.1.8. Լեզվական կարուսել. այն սովորողները, որոնք հասնում են որևէ օտար լեզվի իմացության բարձր մակարդակի (4-րդ փուլ), հնարավորություն ունեն սկսելու նոր լեզվի ուսումնասիրում՝ խթանելով բազմալեզվությունը որպես հարուստ փորձառություն:

5.1.9. Գնահատման գործելակերպ. գնահատման չափորոշիչներում ընդգրկվում են լեզվին հատուկ բաղադրիչներ (հստակություն, ճշգրտություն, կապակցվածություն): Անբավարար արդյունքները դիտարկվում են որպես աճի հնարավորություն՝ խրախուսելով ինքնավերլուծությունը և տոկունությունը:

5.2. Համագործակցային ուսուցում

Համագործակցային ուսուցումը զարգացնում է սոցիալական, հաղորդակցական և միջմշակութային հմտություններ՝ ՄԲ սովորողի նկարագրին համահունչ (հաղորդակից, հոգատար, լայնախոհ և այլն):

5.2.1. Համագործակցային կառուցվածք. դասերը կառուցվում են սովորողների և ուսուցիչների ակտիվ փոխգործակցության վրա՝ խմբային աշխատանքների, բանավեճերի, փոխադարձ արձագանքների և համատեղ հարցումների միջոցով:

5.2.2. Դասավանդման մեթոդություն. ավագ դպրոցի սովորողները աջակցում են կրտսեր ընկերներին՝ կազմակերպելով մայրենի և օտար լեզուներով պարապմունքներ, որոնք խթանում են համայնքային ծառայության մատուցումը և առաջնորդական հմտությունները:

5.2.3. Միջառարկայական նախագծեր. սովորողները համագործակցում են տարբեր լեզուներով և տարբեր առարկաների ոլորտում՝ իրական խնդիրների լուծման, արդյունքների ներկայացման և տարաբնույթ լսարանների հետ մտքեր փոխանակելու համար:

5.3. Հետազոտության վրա հիմնված ուսուցում

Լեզվի ուսուցումը համակցվում է հետազոտական հմտությունների ձևավորման հետ:

5.3.1. Հետազոտական առաջադրանքներ. սովորողները տարբեր աղբյուրներ են օգտագործում (տպագիր, էլեկտրոնային, մուլտիմեդիա) տարբեր լեզուներով՝ տվյալներ, փաստեր հավաքելու, վերլուծելու և մեկնաբանելու համար:

5.3.2. Քննադատական մտածողություն. սովորողներն աշխատում են բացահայտել կողմնակալությունը, գնահատել ապացույցները և կառուցել հիմնավորված կարծիք թիրախային լեզվով:

5.3.3 Հետազոտական նախագծեր. սովորները բազմալեզու աղբյուրներից օգտվե:լով՝ իրականացնում են նախագծեր՝ արտահայտելով սեփական տեսակետները և անդրադառնալով մշակութային համատեքստին:

5.3.4. Ակադեմիական ազնվություն. սովորողները ծանոթանում են հղումների ձևաչափերին և լեզվական էթիկայի կիրառությանը՝ պատրաստվելով ակադեմիական հետազոտություն անցկացնելուն և գրավոր շարադրելուն:

5.4. Հայեցակարգային/կոնցեպտուալ ուսուցում

Լեզվի ուսուցումը հիմնված է գաղափարների վրա՝ նպաստելով գիտելիքի փոխանցելիությանը տարբեր առարկաների միջև:

5.4.1. Կենտրոնացում հիմնական գաղափարներին. սովորողները ուսումնասիրում են կայուն գաղափարներ՝ ինքնություն, մշակույթ, հաղորդակցում, զարգացում և այլն՝ բացառելով միայն փաստերի մտապահումը և սերտումը:

5.4.2. Կապեր. սովորողները հմտանում են պատճառահետևանքային կապեր գտնելու, ընդհանրացումներ անելու և լեզուների, մշակույթների և առարկաների միջև համեմատություններ անցկացնելու, ընդհանրություններ հայտնաբերելու ոլորտներում:

5.4.3. Փոխանցելիություն. մի լեզվի ուսումնասիրությամբ ձեռք բերված հմտությունները (տեքստի ընկալում, բառապաշարի հարստացում, վերլուծում, ինքնարկում, փաստարկում, ընդհանրացում) կիրառվում են մյուսների ուսումնառության ընթացքում՝ ամրապնդելով բազմագրագիտությունը:

5.5. Տեղական և համընդհանուր/գլոբալ համատեքստով ուսուցում

Ճեմարանը կարևորում է լեզվի ուսուցումը որպես կամուրջ՝ ազգային ինքնության և համաշխարհային հաղորդակցության միջև:

5.5.1. Տեղական համատեքստեր. էքսկուրսիաներ, այցելություն թանգարաններ և մշակութային ժառանգության նախագծեր, որտեղ սովորողները ուսումնասիրում են հայոց պատմություն և գրականություն: Նրանք հանդես են գալիս որպես ուղեկցորդներ կամ ներկայացնողներ՝ ցուցադրելով և՛ լեզվական հմտությունները, և՛ մշակութային գիտելիքները:

5.5.2. Գլոբալ համատեքստեր. սովորողներն ուսումնասիրում են օտար լեզուներով գրականություն և պաշարներ/ռեսուրսներ՝ բացահայտելու միջազգային նորարարություն, համաշխարհային ժառանգություն և համընդհանուր հիմնախնդիրներ:

5.5.3. Գիտաժողովներ և փոխանակումներ. տեղական և միջազգային գիտաժողովներին, օլիմպիադաներին ու փոխանակման ծրագրերին մասնակցությունը սովորողներին տրամադրում է կենսական հարթակ՝ կիրառելու լեզուները իրական միջավայրերում:

5.5.4. Հավասարակշռված ինքնություն. տեղական և համընդհանուր/գլոբալ համատեքստերի միջոցով սովորողները ձևավորում են հպարտություն ազգային ժառանգության հանդեպ՝ միաժամանակ հարգելով միջազգային մտածելակերպն ու մշակութային բազմազանությունը:

6. Ներառականություն լեզվի միջոցով

6.1. Ուղղորդող սկզբունք

Շիրակացու ճեմարանը հաստատում է, որ բազմալեզվությունը և՛ փաստ է, և՛ իրավունք, և՛ պաշար/ռեսուրս: Լեզուն հավասարության և ներառականության առանցքն է. բոլոր սովորողները, անկախ պատրաստակամությունից կամ իմացության մակարդակից, ստանում են աջակցություն՝

- լիարժեք մասնակցելու ուսումնական ծրագրին.
- պահպանելու իրենց մայրենի լեզուն(երը).
- հաջողության հասնելու օտար լեզուների յուրացման գործում:

6.2. Ներառական գործելակերպ ըստ ծրագրերի

2.2.1.Կրտսեր դպրոց **(PYP)**.

Սովորողների լեզվական բնութագրերը կազմվում են ճեմարան մուտքի պահին: Նրանց համար կիրառվում են տարբերակված մեթոդներ՝ խաղային և հարցուպատասխանի միջոցով, օրինակ՝ տեսողական նյութեր, պատմող խաղեր, երգեր: Մայրենի լեզվի կիրառությունը խրախուսվում է դասարանում՝ պատմությունների և մշակութային նախագծերի միջոցով՝ ամրապնդելով ինքնությունը:

6.2.2. Միջին և ավագ դպրոց **(MYP** և Հեղինակային ծրագիր**)**.

Միջին դպրոցի ծրագրում (MYP) լեզվի ուսուցումը իրականացվում է փուլային (մակարդակային) մոդելով՝ հիմնված հայտորոշիչ և տեղաբաշխման թեստերի վրա: Դասավանդվում են արագացված հայերեն դասեր և կիրառվում են աջակցող մեթոդներ (երկլեզու բառարաններ, զուգընկերների աջակցություն, լրացուցիչ պարապմունքներ) այն սովորողների համար, որոնք բավարար չեն տիրապետում ուսուցման լեզվին: Հեղինակային ծրագրում ներառականությունը ամրապնդվում է այն ձևով, որ սովորողները նախագծերն ամփոփում և ներկայացնում են հայերեն, ռուսերեն և անգլերեն՝ ընդգծելով և՛ ակադեմիական, և՛ մշակութային ինքնությունը:

6.2.3. Դիպլոմային ծրագիր (DP).

Սովորողների համար հավասար մուտքն ապահովվում է ճկուն տարբերակներով՝ լեզու A, լեզու B, ab initio և Ինքնուսուցմամբ լեզու A (SSST) դասընթացներ: Այն սովորողները, որոնք ուսանում են անգլերենով՝ որպես լրացուցիչ լեզվով, ստանում են աջակցություն ակադեմիական գրավոր խոսքի և առարկայական բառապաշարի ոլորտներում: Տրամադրվում են հարմարեցումներ (օր.՝ երկարացված ժամանակ, բառարաններ)՝ համածայն ՄԲ ուղեցույցների: Օտարախոս սովորողները կարող են մասնակցել «Հայագիտություն» միասնացած դասընթացին՝ ծանոթանալով հայոց լեզվին, գրականությանը, պատմությանը և մշակույթին:

7. Լեզվական զարգացման ռեսուրսներ

7.1. Ուղղորդող սկզբունք

Լեզվական զարգացումը պահանջում է բազմազան ռեսուրսների հասանելիություն: Շիրակացու ճեմարանն ապահովում է ֆիզիկական, թվային և մարդկային ռեսուրսների առկայությունը սովորողների և ուսուցիչների համար՝ բոլոր ծրագրերում աջակցելու բազմալեզվության ծավալմանը, հավասար մուտքին և ակադեմիական հաջողությանը:

7.2. Ռեսուրսներ ըստ տեսակների

7.2.1. Ֆիզիկական ռեսուրսներ.

7.2.1.1 PYP–ի դասասենյակներում կան գրագիտության անկյուններ՝ երկլեզու հեքիաթներով, տեսողական նյութերով և հնչյունային խաղերով:

7.2.1.2. Դպրոցի գրադարանն ունի հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և իսպաներեն գրականության համալրվող հավաքածու՝ բոլոր տարիքային խմբերի համար:

7.2.1.3. Կազմակերպված են ընթերցանության, բանավոր և գրավոր խոսքի զարգացման աշխատաթերթերի, համատեղ նախագծերի համար հատուկ տարածքներ՝ լեզվական ուսուցման մշակույթին նպաստելու համար:

7.2.2. Թվային ռեսուրսներ.

7.2.2.1. Ուսանողները հասանելիություն ունեն լեզուների ուսուցման հավելվածներին (Duolingo, Quizlet, ReadTheory), IB թվային հարթակներին և բազմալեզու էլեկտրոնային գրադարաններին:

7.2.2.2. PYP-ում կրտսեր ուսանողները օգտագործում են ինտերակտիվ գործիքներ (աուդիոգրքեր, պատմողական հավելվածներ), մինչդեռ MYP/DP ուսանողները հասանելիություն ունեն ակադեմիական տվյալների բազաներին, գրավոր հարթակներին (Grammarly, Turnitin) և ՄԲ-ի (IB) նախորդ աշխատանքներին բազմաթիվ լեզուներով:

7.2.2.3. Վիրտուալ դասարանները հնարավորություն են տալիս իրական ժամանակում բազմալեզու համագործակցության և իսկական պաշարներից/ռեսուրսներից օգտվելու համար:

7.2.3.Մարդկային ռեսուրսներ.

7.2.3.1. Լեզվի ուսուցիչները, գրադարանավարներն ու հոգեբանները համագործակցում են ներառական ռազմավարությունների մշակման համար:

7.2.3.2. Մենթորության ծրագրերը թույլ են տալիս ավագ սովորողներին աջակցել կրտսերներին՝ մայրենի և օտար լեզուներով հաղորդակցվելիս:

7.2.3.3. DP-ում ինքնուսուցմամբ լեզու A (SSST) սովորողները ղեկավարների աջակցությամբ են աշխատում՝ ապահովելով մայրենի լեզվի ուսուցման իրավունքը:

7.2.3.4. Ուսուցիչների մասնագիտական զարգացումն օժանդակում է, որ նրանք արդյունավետորեն կիրառեն բազմալեզու ռազմավարություններ և տեղին օգտագործեն ռեսուրսները:

7.3. Ռեսուրսների ինտեգրում

Ռեսուրսները կամ պաշարներն ինքնանպատակ չեն օգտագործվում, այլ ինտեգրված են առօրյա գործընթացում.

7.3.1. ԿԴԾ (PYP)-ում գրագիտության գործիքները համակցված են միջառարկայական հարցումներին:

7.3.2. ՄԴԾ(MYP)/Հեղինակային ծրագրերում երկլեզու բառարանները, պաստառները և հետազոտական առաջադրանքներն օգնում են լեզուն կապելու առարկայական գիտելիքին:

7.3.3. ԴԾ(DP)-ում թվային հարթակներն ու ակադեմիական տվյալների բազաները աջակցում են ծավալուն շարադրանքների, ԳՏՀ շարադրությունների և ներքին գնահատման իրականացմանը:

8. Ծնողների և համայնքի ներգրավվածություն

8.1. Ուղղորդող սկզբունք

Ծնողներն ու համայնքը կարևոր գործընկերներ են բազմալեզվության և միջմշակութային ըմբռնման խթանման գործում: Շիրակացու եռամարքը նպաստում է դպրոցի, ընտանիքի և համայնքային հաստատությունների միջև ակտիվ համագործակցությանը՝ լեզվական ուսուցումը հարստացնելու և ինքնությունը հաստատելու համար:

8.2. Ներգրավվածություն ըստ ծրագրերի

8.2.1. PYP.

- Ծնողները հրավիրվում են հաղորդելու պատմություններ, երգեր և մշակութային ավանդույթներ և զրույցներ իրենց մայրենի լեզուներով՝ դասարանական գործընթացը հարստացնելու նպատակով:

- Ընտանեկան ընթերցանության աշխատաթերթերը և բազմալեզու միջոցառումները խթանում են լեզվի նկատմամբ սերը և աջակցում վաղ գրագիտությանը:

8.2.2. MYP / Հեղինակային / DP.

- Ծնողները մասնակցում են սովորողների լեզվական պրոֆիլների ձևավորմանը և պարբերաբար տեղեկացվում են նպատակների, գնահատման մոտեցումների և առաջընթացի մասին:
- Մշակութային կենտրոնները, դեսպանատները և համալսարանները համագործակցում են Ճեմարանի հետ՝ առաջարկելով լեզվական կենսական փորձառություններ (բանավեճեր, վոխանակումներ, մշակութային օրեր):
- Ծնողներն աջակցում են մայրենի լեզվի պահպանմանը՝ միաժամանակ խրախուսելով սովորողներին գործնականում կիրառելու ուսումնասիրվող լեզուները:
- Համայնքային գործընկերները հնարավորություն են տալիս սովորողներին ներկայացնելու հետազոտություններ, մասնակցելու ՄԱԿ-ի մոդելավորմանը, օլիմպիադաներին և միջազգային գիտաժողովներին, ինչը զարգացնում է նրանց ակադեմիական և միջմշակութային կարողությունները:

8.3. Մասնակցություն համայնքային տոնակատարություններին

- Լեզուների շաբաթվա և Մայրենի լեզվի միջազգային օրվա ընթացքում ցուցադրում են սովորողների տարաբնույթ լեզուներով աշխատանքները:
- Քննարերգության/պոեզիայի բազմալեզու մրցույթները, թարգմանությունները, թատերական ներկայացումները և ցուցահանդեսները սովորողներին տրամադրում են հարթակ՝ բանավոր և գրավոր խոսքով ստեղծագործելու և ներկայացնելու համար:
- Շրջանավարտներն ու համայնքի անդամները հրավիրվում են ներկայացնելու իրենց փորձը, թե ինչպես է բազմալեզվությունը ձևավորել ակադեմիական և մասնագիտական սեփական առաջընթացը՝ ոգեշնչելու համար ներկայիս սովորողներին:

Համայնքային ներգրավվածության միջոցառումներ

	Գործունեություն	Ժամկետ	Պատասխանատու	Ապացույց
1.	Դասի դիտարկումներ և լեզվական աշխատաթերթեր	Ընթացիկ	Լեզվի ուսուցիչներ / համակարգողներ	Դիտարկման հաշվետվություններ, հետադարձ կապ
2.	Մայրենի լեզվի միջազգային օր	Ամեն տարի	Լեզվի կոմիտե / սովորողների խորհուրդ	Միջոցառման ծրագիր, սովորողների անդրադարձներ
3.	Գրքերի ցնծարկումներ (բազմալեզու գրականություն)	Ամսական	Գրադարանավարներ / ուսուցիչներ	Ընթերցման մատյաններ, ցնծարկման մասին նշումներ
4.	Պետական և միջազգային լեզվաբանական օլիմպիադաներ	Ամեն տարի	Լեզվի ամբիոններ	Վկայականներ, մրցույթի հաշվետվություններ
5.	Անգլերենի ուսուցիչների համար սեմինար	Ամեն տարի	Անգլերենի ամբիոն / ԱՄ համակարգող	Սեմինարի նյութեր, մասնակիցների ցուցակ
6.	Թարգմանության օր (սովորողների նախագծեր)	Ամեն տարի	Լեզվի կոմիտե / սովորողներ	Թարգմանված աշխատանքներ, շնորհանդեսներ

9. Լեզվական բաղաբակաևության կոմիտեի սկզբունքներ

Լեզվական բաղաբակաևության կոմիտեն բաղկացած է ուսուցիչներից, ՄԲ համակարգողներից, գրադարանավարներից,

հոգեբաններից, ադմինիստրատորներից, սովորողներից և ծնողներից՝ ապահովելով համայնքի լիարժեք

ներկայացվածությունը:

- Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում կոմիտեն մշակում է գործողությունների պլան՝ Լեզվական բաղաբակաևությունը գործնականում կիրառելու համար:
- Կոմիտեն ապահովում է, որ բաղաբակաևությունը համահունչ լինի ՄԲ–ի չափանիշներին՝ խթանելով բազմալեզվությունը որպես իրավունք, հավասար մուտք և մայրենի լեզուների աջակցություն (ներառյալ ինքնուսուցմամբ լեզու A–ի տարբերակը, կիրառելիության դեպքում):
- Որոշումները հիմնված են տվյալների վրա, ներառյալ սովորողների լեզվական պրոֆիլները, տեղաբաշխման թեստերը, ծրագրի գնահատումները և համայնքի արձագանքները:
- Յուրաքանչյուր կիսամյակ կազմակերպվում են անդրադարձի հանդիպումներ սովորողների, ծնողների և ուսուցիչների հետ՝ գնահատելու լեզվական գործելակերպերի արդյունավետությունը և տոնելու հաջողությունները:
- Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին կոմիտեն կազմակերպում է Լեզվական բաղաբակաևության փաստաթղթի պաշտոնական վերանայում՝ հաշվի առնելով անդրադարձի նիստերի արդյունքները և շահառուների կարծիքները:
- Վերանայված տարբերակները հրապարակվում են դպրոցի կայքում և տարածվում համայնքի շրջանում:
- Կոմիտեն խթանում է ուսուցիչների մասնագիտական զարգացումը և խրախուսում նախաձեռնությունները, որոնք ընդգծում են հայերենի, մայրենի լեզուների և միջազգային լեզուների դերը և նշանակությունը միջմշակութային ըմբռնումը խթանելու գործում:

1. Տարեկան ժամանակացույց լեզվական հաղաքականության կոմիտեի համար

2.Կողմերի պարտականությունները

Կողմ	Իրավունքներ	Պարտականություններ	Օրինակներ գործնականում
Դպրոցի ղեկավարություն	– Սահմանել և հրապարակել լեզվական հաղաքականությունը: – Ապահովել պաշարների/ռեսուրսներ և մասնագիտական զարգացում: – Ստեղծել լեզվական հաղաքա կանության կոմիտե:	– Մշակել և ամեն տարի վերանայել լեզվական փիլիսոփայությունը և հաղաքականությունը: – Ապահովել, որ ուսուցիչների ընտ րությունը և պրոֆիլները արտացո լեն լեզվական կարողությունները: – Ամեն ուստարվա ավարտին վերանայել հաղաքականությունը՝ ներգրավելով համայնքի բոլոր անդամներին:	–Թարմացված հաղաքակա նության տեղադրում կայ ֆում: –Ուսուցիչների լեզվական իմիճագնահատում:
Ուսուցիչներ	–Օգտվել ռեսուրսներից, ուսուց ման և համագործակցության հնարավորություններից:	–Լեզվական նպատակները ներառել բոլոր առարկաների ուսուցման մեջ: – Համագործակցել այլ առարկաների ուսուցիչների հետ (ուղղահայաց և հորիզոնական պլանավորում): – Լեզուների գրագետ կիրառության օրինակ դառնալ: –Գնահատել բանավոր և գրավոր խոսքի դրսևորումը և տրամադրել հետադարձ կապ:	–Միջառարկայական նախագծեր: – Դասալսումների դիտար կումներ և փորձի փոխանա կում: –Երկլեզու/եռալեզու բառա րանները: – Լեզվի օրեր, բանավեճեր, մրցույթներ, ներկայացում ներ:
Աշակերտներ	–Բազմալեզու կրթության և մայրենի լեզվից աջակցության հնարավորություն: –Մասնակցել հաղաքականութ յան ձևավորման և մշակման գործընթացին:	–Ակտիվորեն մասնակցել լեզուների ուսումնառության գործընթացին: – Կիրառել ճիշտ և հարգալից խոսք/գրություն: –Ամեն տարի ներկայացնել լեզուների	–Տարաբնույթ նախագծեր հայերեն, ռուսերեն կամ անգլերեն: –Կազմակերպել, անցկացնել և մասնակցել վիկտորինա ների, մրցույթների, ներկա յացումների: – Լեզուների ուսուցման և

		իմացության և խոսքային կարողության բնութագիր/պրոֆիլ: –Ներգրավվել նախագծերի և խաղ խաղացության վերաձայումներին և լրամշակումներին:	ուսումնառության վոխօգ նություն հասակակից և կրտսեր ընկերների միջև:
Ծնողներ/խնամակալներ	–Տեղեկացնել սովորողի լեզվա կան առաջընթացի մասին: –Նպաստել լեզուների ուսում նառության պլանավորմանը և խաղաֆակացության վերաբերյալ կարծիքի դրսևոր մանը:	–Աջակցել լեզվի զարգացմանը տանը և դպրոցում: –Օրինակ ծառայել հարգալից խոսքի կիրառության ոլորտում: –Ընդունել և ապահովել խաղ խակացության սկզբունքների իրա կանացումն ընտանիքում:	–Ծնողավարման սեմինար ներ երկլեզվության մասին: –Հանդիպումներ ուսուցիչ ների հետ լեզուների ուսուցման և ուսումնառու թյան հարցերով: –Ներդրում և մասնակցութ յուն մշակութային բազմա լեզու միջոցառումներին:

Օգտագործված աղբյուրներ

Հայաստանի Հանրապետության օրենքը **«Լեզվի մասին»,** ՀՀ Ազգային ժողով, 1993:

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=68775.

Հ Հ Հանրակրթության պետական չափորոշիչ : ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, 2021, փետրվար:
https://www.arlis.am/documentview.aspx?docid=57923.

Հայաստանի Հանրապետություն. Հայոց լեզվի և գրականության առարկայական չափորոշիչ և ծրագիր ավագ դպրոցի համար: ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, 2010:
https://www.arlis.am/documentview.aspx?docid=57923.

International Baccalaureate Organization. **Guidelines for Developing a School Language Policy**: IB, 2008:

International Baccalaureate Organization. **Guidelines for School Self-Reflection on Its Language Policy**: IB, 2008:

International Baccalaureate Organization. **Towards a Continuum of International Education**: IB, 2008:

International Baccalaureate Organization. **Diploma Programme: From Principles into Practice**: IB, 2015:

International Baccalaureate Organization. **MYP: From Principles into Practice**: IB, 2014:

Նշում աջակցման աղբյուրների վերաբերյալ

Վերահայման հանձնաժողովը հաստատում է, որ լրամշակման ընթացքում օգտագործվել են արհեստական բանականությամբ օժանդակվող գործիքներ (օր.՝ *ChatGPT by OpenAI),* մասնավորապես՝ լեզվական ձևակերպումների հստակեցման և հղկման նպատակով: Բովանդակային բոլոր որոշումները կայացվել են դպրոցի լեզվական խորհրդակցության թիմի կողմից:

4. Հավելված **1**. Ձև **1**. Աշակերտի լեզվական նկարագիր/պրոֆիլ

Աշակերտի անուն, ազգանուն _____

Ամսաթիվ _____

Դասարան _____

Դաշտ	Մանրամասներ	Իրիրագիտություն (շրջապատել մակարդակը)
1. Մայրենի լեզու		Հիմնական Միջին Առաջադեմ Բարձր/ազատ
2. Ընտանիքում կիրառվող լեզու/ներ		Չկա
3. Հայերենի բարբառով հաղորդակցում (եթե կիրառելի է)		Չկա
4. Հիմնական հաղորդակցման լեզու		Հիմնական Միջին Առաջադեմ Բարձր/ազատ
5. Մտածողության լեզու		Հիմնական Միջին Առաջադեմ Բարձր/ազատ
6. Մայրենի լեզվի տիրապետում		Հիմնական Միջին Առաջադեմ Բարձր/ազատ
7. Կրթության լեզու (ուսուցման լեզու)		Չկա
8. Նախկինում ուսումնասիրված օտար լեզուներ		Հիմնական Միջին

		Առաջադեմ Բարձր/ազատ
9. Ազատորեն տիրապետում է օտար լեզուների		Հիմնական Միջին Առաջադեմ Բարձր/ազատ
10. Լեզվի մակարդակը ճշող վկայականներ (օր.՝ IELTS, TOEFL, DELF, Goethe)		Գնահատական՝
11. Աշխատանքային փորձ մայրենի լեզվով միջավայրում (ճանապարհոր դություն, փոխանակում, բնակություն)		Տևողություն՝
12.Ուսումնասիրության համար նախա տեսված լեզուներ		Չկա
13. Ուսումնառության նպատակները (ակադեմիական, մշակութային, մասնագիտական, անձնական)		Չկա

Աշակերտի ստորագրություն՝ _____

Ծնողի/Խնամակալի ստորագրություն՝ _____

6. Հավելված **2**. Ջև **2**. Ուսուցչի / Խորհրդատուի / Աշակերտական առաջնորդի լեզվական նկարագիր/ պրոֆիլ

Անուն, ազգանուն _____

Ամսաթիվ _____

Պատոռն _____

Տիրույթ	Մանրամասներ	Իրիճագնահատում (շրջանակի մեջ նշեք մակարդակը)
1. Մայրենի լեզու		Հիմնական Միջին Առաջադեմ Բարձր/ազատ
2.Ընտանիքում գործածվող լեզու (տանը ընդունված խոսք)		Բացակայում է
3. Հայերենի որևէ բարբառով հաղորդակցում (եթե կիրառելի է)		Բացակայում է
4.Հիմնական հաղորդակցման լեզու		Հիմնական Միջին Առաջադեմ Բարձր/ազատ
5.Խոսք (մտածական լեզու)		Հիմնական Միջին Առաջադեմ Բարձր/ազատ
6.Մայրենի լեզվի տիրապետում		Հիմնական Միջին Առաջադեմ Բարձր/ազատ

7. Կրթության լեզու (դպրոց, ուսում)		N/A
8. Ուսուցանված օտար լեզուներ		Հիմնական Միջին Առաջադեմ Բարձր/ազատ
9. Ազատորեն տիրապետում է օտար լեզուների		Հիմնական Միջին Առաջադեմ Բարձր/ազատ
10. Լեզուների տիրապետման մակարդակ ճշող վկայականներ (IELTS, TOEFL, DELF, Goethe և այլն)		Մակարդակ
11. Փորձ մայրենի լեզվի միջավայրերում		Տևողություն
12. Լեզվի պրոֆեսիոնալ օգտագործում (դասավանդում, հետազոտություն, հաղորդակցություն)		Այո / Ոչ
13. Մասնագիտական ընթեր ցանության լեզու (գրականություն, հետազոտություն, վեպեր)		
14. Լեզվի ընթացիկ ուսուցում (եթե կիրառելի է)		Հիմնական Միջին Առաջադեմ Բարձր/ազատ
15. Օտար լեզուներ սովորելու նպատակը(ներ)		Ակադեմիական Մշակութային Մասնագիտական Անձնական

6. Տարբերակների կառավարման մասյան

Տարբերակ	Ամսաթիվ	Փոփոխություններ	Պատասխանատու	Նշումներ / Ապացույցներ
1.0	Սեպտեմբեր 2020	Լեզվական ուսուցման հաղա հականության նախագիծ (միջին և ավագ դպրոցների շեշտադրումով):	Լեզվի կոմիտե	Առաջին հաստատված տարբերակ
2.0	Հունիս 2021	Խմբագրվել է IB Դիպլոմային ծրագրի բաժինը (Խումբ 1 և 2 դասընթացներ, SSST):	Դիպլոմային ծրագրի համակարգող	Ինտեգրվել են IB պահանջները
3.0	Սեպտեմբեր 2023	Ներառվել են PYP և հեղինակային ծրագիր, համապատաս խանեցվել IB–ի բազմալեզվութ յան ուղեցույցներին:	PYP և MYP համակարգողներ	Ապահովվել է շարունակականությունը

4.0	Մարտ 2024	Խմբագրվել են կողմերի պար տականությունները, ավելացվել են տարեկան վերանայման գործընթացը և անդրադարձի ճստաբրջանները:	Լեզվի կոմիտե	Ըստ IB հիմնավերանայված ուղեցույցի
5.0	Սեպտեմբեր 2025	Թարմացվել են պաշարները /ռեսուրսները, համայնքի ներգրավման միջոցառումները, աշակերտի/ուսուցչի լեզվական նկարագրի ձևերը՝ հիմնագնահատմամբ և վկայականներով, ավելացվել է MLA գրականության ցանկ:	ՄԲ (IB) համակարգողներ, տնօրեններ	Պատրաստվել է CIS և IB գնահատման համար